<< Էդիտ պրինտ>> հրատարակչություն

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Նախադպրոցական կրթության պետական չափորոշիչը և կերպարվեստի մեթոդիկային ներկայացվող պահանջները

Հաստատություն՝ <<Ամենագետներ նախակրթարան>>

Դաստիարակ՝ Անուշ Սարգսյան

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……..3

Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը՝ համալիր ծրագրերի ստեղծման հիմք……4

Կերպարվեստի մեոդիկային ներկայացվող պահանջներն ու կերպարվեստի պարապմունքների ազդեցությունը երեխայի վրա……10

Եզրակացություններ……14

Գրականության ցանկ……15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդիականությունը

Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականությունը շարունակելով նախադպրոցական կրթության համակարգի կառավարման բարելավումները և միաժամանակ խրախուսելով համակարգի ընդլայնումը՝ խիստ կարևորում է կրթության բովանդակությանն առնչվող հարցերը, մասնավորապես, նախադպրոցական կրթության չափորոշչի ձևավորումը, դրան համապատասխան նախադպրոցական կրթության համալիր ծրագրի մշակումը և դրանց իրականացման նկատմամբ պետական վերահսկողությունը։

Արդի ժամանակաշրջանում նախադպրոցական հաստատությունները, բացի խնամքի կենտրոններ լինելուց, իրականացնում են նաև ուսումնական հստակ ծրագրեր։ Նախադպրոցական տարիքի երեխաների կրթական ծրագրի հիմնական խնդիրներն են երեխաների առողջության պահպանումն ու ամրապնդումը, նրանց ներդաշնակ ու համակողմանի զարգացման ապահովումը, դաստիարակների գործունեության բացազատումը։

Թեմայի նպատակն է՝

- Ուսումնասիրել նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը և կերպարվեստի մեթոդիկային ներկայացվող պահանջները

Թեմայի նպատակից բխում են մի շարք **խնդիրներ՝**

- Բացահայտել նախադպրոցական կրթության պետական չափորոշչի կարևորությունը, որպես համալիր ծրագրերի ստեղծման հիմք։
- Վերլուծել նախադպրոցական տարիքում կերպարվեստի մեթոդիկային ներկայացվող պահանջները

Աշխատանքի ծավալը և կառուցվածքը.

Աշխատանքը կազմված է տիտղոսաթերթից, ներածական մասից, բովանդակությունից(բովանդակությունը կազմված է երկու ենթավերնագրերից), եզրակացությունից և գրականության ցանկից։

Համակարգչային շարվածքով նյութը կազմում է էջ։

Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը՝ համալիր ծրագրերի ստեղծման հիմք

Նախադպրոցական կրթության պետական չափորոշիչները մշակված են «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 2004թվականի մայիսի 27-ի համար 20 որոշմամբ ընդունված «Հանրակրթության պետական կրթակարգով» ամրագրված պահանջների համապատասխան:

Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը կազմում է վաղ մանկության զարգացման ընդհանուր չափորոշչի բաղադրամաս և սահմանում է նախադպրոցական տարիքի երեխաների կրթական ծրագրերի բովանդակության նախագծման հիմնական ուղղությունները: Չափորոշչում նախադպրոցական կրթության բովանդակությունը ներկայացվում է տարանջատված կրթադաստիարակչական ոլորտ-տիրույթների և բաղադրիչների միջոցով:

Չափորոշչում նպատակաուղղվում է նախադպրոցական տարիքի երեխայի իմացական շարժառիթների խթանմանը, նրա ինքնաճանաչման, ինքնադրսևորման, համակողմանի ու ներդաշնակ զարգացման ապահովմանը, կենսակերպի հիմքերի ձևավորմանն ու սոցիալականացմանը:

Չափորոշիչը նաև կրթադաստիարակչական հիմնական ծրագրերի նպատակների իրագործումը ցույց տվող ցուցանիշների կատարման ընդունված մակարդակն է:

Չափորոշիչը մշակվում է համագործակցային աշխատանքի աչդյունքում և հաստատվում շահագրգիռ կողմերի համաձայնությամբ: Այն ներառում է ընդհանուր սկզբունքներ կամ գործունեության տարբեր տեսակներնն ու արդյունքներին վերաբերող բնութագրեր, որոնք ուղղված են կարգավորելու հաջողությունների առավել լավորակ աստիճանը որոշակի իրադրության մեջ:

Չափորոշիչը երեխայակենտրոն կրթության հիմք է հանդիսանում:

Չափորոշիչը հնարավորություն է տալիս արձագանքելու երեխաների կարիքներին և հետաքրքրություններին, հարգելու յուրաքանչյուր երեխայի անձը և զարգացնելու ուժեղ կողմերը, խթանելու համատեղ ուսումնառության գործընթացը:

Չափորոշիչը որոշակի է, չափելի, հասանելի, համապարփակ, իրատեսական և ժամկետային:

Չափորոշչի հիման վրա մշակված նախադպրոցական կրթական ծրագրերի ներդրումը պարտադիր է նախադպրոցական ուսումնական հաստատությունների համար։

Նախադպրոցական բոլոր տարիքային խմբերի երեխաների կրթության և խնամքի չափորոշիչների սահմանումը ապահովում է կրթական քաղաքականության միասնականությունը և հաջորդայնությունը։

Չափորոշիչը նորմատիվ է, որը սահմանում է երեխայի զարգացման, կրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, երեխաների ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը և երեխաներին ներկայացվող որակական պահանջները։

Չափորոշչին համապատասխան՝

1. Ստեղծվում է երեխաների անվտանգության, խնամքի, զարգացման և կրթության համար անհրաժեշտ միջավայր, այդ թվում նաև՝ սանիտարահիգենիկ պայմաններ։
2. Մշակվում են նորմատիվ ակտերի նախագծեր, նախադպրոցական կրթության ծրագրեր, ուսումնամեթոդական փաստաթղթեր և նյութեր,այդ թվում նաև՝ երեխաների ծնողների համար երաշխավորություններ, ուղղեցույցներ, հանրամատչելի գրքույկներ։
3. Իրականացվում է նախադպրոցական կրթության բնագավառում աշխատող ղեկավար, մանկավարժական կադրերի ու սպասարկող անձնակազմի , մասնագիտական կատարելագործումը և ատեստավորումը։
4. Ուսումնասիրվում, վերահսկվում և գնահատվում է նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների գործունեությունը։

Նախադպրոցական կրթության պետական չափորոշչի ձևավորման սկզբունքներն են՝

- Վաղ մանկական տարիքի երեխաների զարգացման առանձնահատկությունների հաշվառումը, ուսումնադաստիարակչական աշխատանքի անհատականացման ապահովումը
- Երեխաներին ներկայացվող պահանջների և նրանցից ունեցած ակնկալիքների հստակ սահմանումը, մտքի և խոսքի ազատ դրսևորման ապահովումը
- Ուսումնադաստիարակչական գործունեությունը պլանավորելիս համալիր, բազմակողմանի մոտեցման, խաղի գերակայության և խաղային գործունեության ապահովումը

- Երեխայակենտրոն ուսումնադաստիարակչական և ֆիզիկական միջավայրի ստեղծման կարևորումը
- Ուսումնադաստիարակչական ծրագրերում խոսքի զարգացման, ,այրենի լեզվով հաղորդակցվելու, տրամաբանական մտածողության, ինքնուրույն գործունեության տարբեր ձևերի տիրապետման, ֆիզիկական, բարոյագիտական, հայրենասիրական, բնապահպանական, աշխատանքային դաստիարակության ապահովումը
- Բարեկիրթ վարքի դաստիարակման, ստեղծագործական ունակությունների, ընդհանուր հմտությունների, ընդունակությունների և հնարամտության առողջ սովորույթների զարգացման ապահովում
- Ուսումնադաստիարակչական գործընթացում ընտանիքի գործուն դերի ապահովումը, ծնողների ներգրավումը
- Երեխայի սահուն անցման ապահովումը տարրական դպրոց:

Չափորոշչային հետևյալ սկզբունքներից հետևում է, որ բարձրորակ նախադպրոցական կրթության ապահովման համար կարևորվում են երեխան, ընտանիքը, մանկավարժը, ուսումնական ծրագրերը և կրթության կազմակերպման միջավայրը:

Երեխայի հետ աշխատանքում առաջնային են հետևյալ սկզբունքները՝

- Երեխան հարգված է, խնամված և խրախուսված:
- Երեխան ունի իր կենսական հմտություններն ու գիտելիքները շարունակաբար զարգացնելու, դիրքորոշումները ձևավորելու հնարավորություններ:
- Երեխային ընձեռվում է տարբեր իրավիճակներում որոշումներ կայացնելու ազատություն:
- Երեխան մասնակից է անհատական և խմբային աշխատանքների:
- Երեխայի մայրենի լեզուն և ընտանեկան սովորույթները յարվում են և գնահատվում:

Նախադպրոցական տարիքում երեխայի կրթության մեջ անհրաժեշտ է առաջնորդվել գիտելիքի աստիճանական ընդլայնման մոտեցմամբ՝ օգնելով նրան կապակցելու նոր գիտելիքը արդեն ձեռք բերածի հետ:

Չափորոշիչը պետք է բխի երեխայի զարգացման առանձնահատկություններից և հաշվի առնի, որ տարբեր երեխաների զարգացումը չի ընթանում միանման, ուստի այն չպետք է դառնա կաղապար, որը կանխորոշում է երեխայի ապագան և սահմանափակում բնականոն զարգացումը:

Նախադպրոցական կրթական ծրագիրը մշակվում է չափորոշչին համապատասխան և դիտարկվում է որպես հանրակրթության բաղկացուցիչ՝ ապահովելով երեխայի կրթության շարունակականությունը։

Նախադպրոցական կրթության ծրագիրը խթանում է յուրաքնչյուր երեխայի անհատական աճը և օգնում է նրան զարգանալ կայուն տեմպերով՝ դրսևորելով իր սեփական կարողություններն ու ներուժը։

Պետությունը նախադպրոցական կրթական ծրագրերում սահմանում է նախադպրոցական կրթության նպատակներն ու խնդիրները, ինչպես անև պահանջները՝ երեխայի կրթությունն ու խնամքը իրականավնող կազմակերպությունների և ֆիզիկական անձանց նկատմամաբ։

Նախադպրոցական կրթութունը Հայաստանի Հանրապետությունում շարունակական կրթության համակարգի սկզբնական բաղկացուցիչ մասն է։ Արդի փուլում կրթության համապարփակ բարեփոխումների գործընթացները պայմանավորված են կրթության ոլորտի բոլոր կառույցների համակարգված գործունեությամբ։

Չափորոշիչը նորմատիվ է, որը սահմանում է երեխայի զարգացման, կրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, երեխաների ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը և երեխաներին ներկայացվող որակական պահանջները։

Նախադպրոցական կրթական ծրագիրը մշակվում է չափորոշչին համապատասխան և դիտարկվում է որպես հանրակրթության բաղկացուցիչ՝ ապահովելով երեխայի կրթության շարունակականությունը։

Նոր ծրագիրը կազմված է երեխաների նախադպրոցական կրթության չափորոշիչների հիման վրա՝ երեխաների դաստիարակության և ուսուցման հոգեֆիզիոլոգիական հնարավորությունների հաշվառմամբ։

Ծրագիրը կազմելիս հաշվի են առնվել նախադպրոցական կրթության պետական չափորոշիչների հիմնական սկզբունքները՝ դրանց կառուցվածքը և գործառույթները, որոնք ներառում են կրթադաստիարակչական հիմնական ուղղությունները և բովանդակության բաղադրիչներրմ երեխային ներկայացվող ընդհանուր կրթական պահանջները, երեխաների զարգացման փուլին համապատասխան ակնկալիքները։

Ելակետային է համարվել երեխաների ուսումնական և խաղային բեռնվածության երաշխավորվող չափի, երեխայակենտրոն ուսուցման և դաստիարակության, շարունակական կրթության ապահովման պահանջը։

Օգտագործված են նախադպրոցական դաստիարակության նորագույն նվաճումները, նախադպրոցական կրթադաստիարակչական հիմնադրույթները, որոնք պահանջում

են արմատական վերափոխում երեխաների դաստիարակության և ուսուցման բովանդակության, մեթոդների, երեխա-մանկավարժ փոխհարաբերությունների նորացման ուղղությամբ։

Ծրագիրը նախատեսված է մինչև վեց տարեկան երեխաների ֆիզիկական, մտավոր, գեղագիտական և բարոյական դաստիարակության համար՝ նրանց տարիքային առանձնահատկություններին համապատասխան։

Ծրագրով առաջարկվող մանկավարժական գործընթացի հիմքում ընկած է համագործակցային մոդելը, ուսուցման տեխնոլոգիաներում՝ նախադպրոցականի ակտիվ ուսուցման մեթոդիկան՝ փոխներգործուն մեթոդների լայն կիրառմամբ։

Նոր ծրագիրը նախատեսում է ուսուցումը և դաստիարակությունը իրականացնել հայրենիքի նկատմամբ սիրո, ընտանիքի, ազգային ավանդույթների, մայրենի լեզվի, ազային արժեքների նկատմամբ հարգանքի, սեփական անձի, շրջապատի և շրջակա միջավայրի նկատմամբ հարգալից վերաբերմունքի ձևավորում ու արմատավորում։

Կրթադաստիարակչական աշխատանքներն իրականացնել անհատակողմնորոշիչ մոտեցման սկզբունքով, որի հիմքը ողջ կրթադաստիարակչական աշխատանքների մարդայնացումն է, գերխնդիրը՝ անհատի համակողմանի և ներդաշնակ զարգացումը, այն նշանակում է ապահովել երեխայի հոգեբանական պաշտպանվածության զգացումը, նրա մեջ ստեղծել վստահություն շրջապատող աշխարհի նկատմամբ, լինել առողջ, հիմք դնել երեխայի անհատական զարգացմանը, որոնք ներթափանցում են մանկական հիմնարկում երեխայի կյանքի ամբողջ կազմակերպման, առարկայական զարգացնող միջավայրի, ռեժիմի և մնակական գործունեության տարբեր տեսակների, տարիքային և անհատական առանձնահատկությունները հաշվի առնելու մեջ։

Սույն ծրագրերը նորովի են իմաստավորում ուսուցման թե՛ բովանդակությունը, թե՛ սկզբունքները, նախատեսում է գիտելիքների, ունակությունների, հմտությունների ուսուցմամբ անցում դեպի դրանց կյանքում օգտագործելու բուն հնարավորությունների զարգացմանը։

Նպատակաուղղման, պլանավորման, կանխատեսման, վերահսկման և արդյունքների ու դրանց հետևանքների գնահատման հիմունքների ուսուցումը կատարվում է խաղային և ոչ խաղզային հանգամանքների զուգորդման, դաստիարակի և երեխաների միջև դերերի բաշխման միջոցով։ Ուսուցման նպատակն է՝ երեխայի մեջ ծնվող հույզերը համաձայնեցնել մեծերի հուզական ապրումների և դրսևորումների սոցիալապես առաջադրված ձևերի հետ։ Ուսուցման ընթացքում երեխան ապրում է իմացության բերկրանք՝ աշխատանքի, բնության, արվեստի ստեղծարծությունների, գեղեցկության հանդեպ, ուրիշի համար տագնապ,իր հաջողության համար՝ հպարտություն։

Ծրագրում նախատեսված են զարգացման հետևյալ հիմնական ոլորտները՝

1. Խոսքի, լեզվամտածողության, տրամաբանության, ընդհանուր ճանաչողական զարգացում
2. Սոցիալական ու զգացմունքային զարգացում
3. Շարժողական և ֆիզիկական զարգացում
4. Ինքնուրույն գործունեության տարբեր տեսակների, այդ թվում ուսումնական և ստեղծագործական ունակությունների,հնարամտության, առողջ սովորությունների զարգացում
5. Արժեքային հիմունքների ձևավորումը, բարեկիրթ վարքի, գեղագիտական, հայրենասիրական, բնապահպանական, աշխատանքային դաստիարակությանը:

Ծրագիրը հնարավորություն է տալիս դաստիարակության և ուսուցման խնդիրներն իրականացնել առօրյա շփումներում և գործունեության տարբեր ձևերում՝ խաղի, աշխատանքի, գեղագիտական գործունեուրության, միմյանց հետ երեխաների ազատ և ինքնուրույն հաղերդակցման ընթացքում:

Ծրագիրը կառուցված է ավանդաբար ընդունված հինգ կարևոր բաժիններից՝ մայրենի լեզու, մաթեմատիկա, կերպարվեստ, ֆիզկուլտուրա, երաժշտություն և գործունեության ձևերից՝ խաղ և աշխատանք:

Ծրագիրը նախատեսում է երեխաների մեջ դաստիարակել մարդասիրական վերաբերմունք, զարգացնել բարոյական պատկերացումները բարության, կարեկցանքի, հոգատարության և անկեղծության մասին: Տարբեր ժողովուրդների նկատմամբ դրական վերաբերմունքի, ինտերնացիոնալ զգացումների հիմքերը դրվում ենազգայինի մեջ համամարդկայինի հիմունքը ընդգծելու միջոցով:Այստեղ դաստիարակության հիմնական ուղին երեխայի շարժումն է դեպի ընդհանուր մարդասիրական արժեքներ, որոնք բացահայտվում են ազգային մշակույթի, պարերի, երգերի, առածների, առակների հաղորդակցման միջոցով:

Բոլոր բաժինների գծով կրթական մասի ծրագիրը տրված է ըստ քառորդների, որը հեշտացնում է նյութի հավասարապես բաշխումը և իրացնում կրկնության սկզբունքը:

Դաստիարակության բովանդակությունը տրված է ամբողջ տարվա համար դա պատահական չէ, դաստիարակչական խնդիրները չի կարելի լուծել կարճ ժամկետում, դրանք չի կարելի հերթական կարգով վերցնել, քանի որ իրականացվում է միաժամանակ, անընդհատ և օրեցօր:

Կերպարվեստի մեթոդիկային ներկայացվող պահանջներն ու կերպարվեստի պարապմունքների ազդեցությունը երեխայի վրա

Նախադպրոցական տարիքը իր մեջ ընդգրկում է 3-6 տարեկանը: Դեռևս նախադպրոցական տարիքից է դրվում անձի ձևավորման հիմքերը: Անձի ձևավորման և զարգացման հզոր գործիք է համարվում արվեստը: Արվեստը, լինելով մարդկային ստեղծագործությունների միասնություն, համարվում է նաև հասարակության գիտակցության ձևերից մեկը: Արվեստն օգնում է ճանաչել աշխարհը, ձևավորում է երեխայի զգացմունքներն ու մտքերը: Արվեստի տարբեր բնագավառների ուսումնասիրությունը նրբացնում է երեխայի ընկալումը և զգացողությունը, երևակայության ունակությունը, զարգացնում է ստեղծագործական մոտեցումը:

Դեռ հին ժամանակներից հայտնի նկարիչները և արվեստագետները՝ Ալբրեխտ Դյուրերը, Լեոնարդո դա Վինչին և այլոք ստեղծել են մանկավարժական նշանակություն ունեցող գրքեր, որոնց միջոցով փորձել են մարդուն էլ ավելի մոտեցնել արվեստին և նրա մեջ սերմանել գեղագիտական ճաշակ և գեղեցիկը ընկալելու և գնահատելու կարողություն:

Կերպարվեստը երեխայի համար ամենամասայականն է: Երեխան իր ճանաչած առարկան, որպես կանոն, սկսում է պատկերել 3-4 տարեկանից: Նրա պատկերածը տեսանելի է և գործուն: Ավելի ուշ մանկական նկարը խաղային թեքում և բովանդակություն ունեցող գծանկարչական պատմվածք է:

Սուխոմլինսկին մշակել է <<դաստիարակությունը գեղեցկությամբ>> համալիր գեղագիտական ծրագիրը: Սուխոմլինսկին երեխաներին սովորեցնում էր հասկանալ շրջակա աշխարհի գեղեցկությունը:

<<Գեղեցկության ըմբռնումը , իմաստավորումը գեղագիտական կրթության հիմքն է, առանցքը: Գեղեցիկի ընկալումից է սկսվում գեղագիտական մշակույթի դաստիարակումը, զգացմունքների դաստիարակությունը: Երեխաները պետք է ապրեն գեղեցկության, խաղի, հեքիաթի, նկարների, երևակայության, ստեղծագործության աշխարհում: Այդ աշխարհը պետք է շրջապատի երեխային ամենուր:>>

Սուխոմլինսկի

Նախադպրոցական տարիքի երեխաների համար գերագույն հաճույք է զբաղվել կերպարվեստային գործունեությամբ՝ նկարչությամբ, ծեփակերտմամբ, և կառուցողական աշխատանքով: Նման զբաղմունքը երեխային պարգևում է ուրախություն և բերկրանք: Կերպարվեստային գործունեության ընթացքում երեխան ստանում է ինքնարտահայտման և ինքնադրսևորման հնարավորություն, դրական զգացողություններ:

Այս տարիքային խմբի երեխաների համար կերպարվեստային գործունեության ծրագրում հիմնականում ձևագոյացման և շարժումների յուրացումն է: Երեխան ձեռք է բերում առարկայի ձևը զգալու և այն արտաքին աշխարհին փոխանցելու հմտություն:

Կերպարվեստային գործունեության ընթացքում տեղի է ունենում բուռն ճանաչողական զարգացում: Այս տարիքի երեխաներն արդեն ձևավորում են առարկաների ձևի, գույնի, չափի վերաբերյալ առաջին զգայական կողմնորոշումները, զզարգանում են լսելու, տեսնելու, դիտելու, վերլուծելու ունակությունները: Կրտսեր առաջին խմբում սկսվում է կերպարվեստային գործունեության համար կիրառվող նյութերին և որձիքներին սկզբնական ծանոթացումը, ինչը և խթանում է երեխաների հետաքրքրասիրությունը մատիտի, յուղամատիտի, վրձնի, ներկերի, կավի, ծեփանյութի հետ կատարվող գործողությունների նկատմամբ:

Կերպարվեստային գործունեության նպատակն է՝

Ստեղծել բարենպաստ պայմաններ երեխայի գեղաիտական զգացողության զարգացման համար: Արթնացնել նրանց մեջ գեղեցիկի նկատմամբ հուզական վերաբերմունք: Զարգացնել հետաքրքրասիրություն կերպարվեստային գործունեության տեսակների՝ նկարչության, ծեփի, կառուցողական աշխատանքների նկատմամբ:

Շարունակել երեխաների ուշադրության կենտրոնում պահել շրջապատում գտնվող գեղեցիկ առարկաները, բնության երևույթները, և դրանց դիտումների շնորհիվ հասնել զգայական ընկալման և դրական հույզերի զարգացման:

Ստեղծել ազատ, անկաշկանդ միջավայր ինքնուրույն աշխատելու, ստեղծագործելու, գեղարվեստական գործունեությամբ զաբաղվելու համար:

Կերպարվեստային գործունեության խնդիրներն են՝

- խթանել հետաքրքրասիրություն կերպարվեստային գործունեության տեսակների նկատմամբ,
- ծանոթացնել կերպարվեստային նյութերին, ձևավորել նախնական հմտություններ մատիտի, վրձնի, գուաշի, ջրանեձրկի, ծեփանյութերի հետ աշխատելու նպատակով,
- զարգացնել պարզ առարկաներ պատկերելու կարողություններ,
- սովորեցնել նկարելով բացահայտել առարկաների հարաբերությունները իրար նկատմամբ,
- սովորեցնել ծեփելով բացահայտել առարկաների հարաբերությունները իրաի նկատմամբ
- սովորեցնել զգալ, տեսնել, դիտել շրջապատող աշխարհը
- ձևավորել երևույթների և առարկաների նկատմամբ երեխաների հուզական-զգայական վերաբերմունքը
- ձևավորել կերպարային պատկերացումները՝ շոշափելու օգնությամբ,
- զարգացնել ուշադրությունը, դիտողականությունը, պատկերացումները առարկաներին բնորոշ հատկությունների՝ ձևի, չափի, գույնի նկատմամբ։

Տարեվերջին երեխաները պետք է կարողանան՝

Նկարչություն

- ճանաչել նկարչական նյութերը, միջոցները
- ճիշտ բռնել մատիտը, յուղամատիտը, վրձինը
- հայացքով հետևել մատիտի, վրձնի շարժման ուղղությանը թղթի վրա
- հանել վրձնից ավելորդ ջուրը կամ ջրաներկը՝ ջրամանի եզրին քսելով
- աշխատել փորձաթղթով
- ներկել վրձնով
- ճանաչել և տարբերել հիմնական գույները
- նկարելու ընթացքում պահպանել ճիշտ կեցվածք
- խնամքով օգտագործել նկարչական նյութերը և օգտագործել դրանք ըստ անհրաժեշտության
- նկարել թղթի վրա տարբեր ուղղություններով գծեր։

Ծեփակերտում

- ճանաչել ծեփվող նյութերը՝պլաստիլին, աղիխմոր, կավ
- շրջանաձև շարժումներով ստանալ գնդաձև մարմին
- ծեփել գլան հետ-առաջ շարժումներով
- գլանի եզրերը միացնել իրար՝ ամուր սեղմելով
- ծեփանյութից պոկել փոքր մասեր
- ափերի միջոցով տափակեցնել ծեփանյութը
- սովորել ծեփել պարզ առարկաներ
- աշխատել կոկիկ
- օգտվել տակդիրից

Կառուցողական աշխատանք

- տարբերել և անվանել կառուցողական հիմնական նյութերը
- մեծահասակի օգնությամբ կառուցել նմուշին համապատասխան պարզ շինություն
- օգտագործել հնարավորինս շատ կառուցողական նյութեր
- խաղալ կառուցած շինություններով։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Չափորոշիչը նորմատիվ է, որը սահմանում է երեխայի զարգացման, կրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, երեխաների ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը և երեխաներին ներկայացվող որակական պահանջները: Նախադպրոցական կրթական ծրագիրը մշակվում է չափորոշչին համապատասխան և դիտարկվում է որպես հանրակրթության բաղկացուցիչ՝ ապահովելով երեխայի կրթության շարունակականությունը: Չափորոշիչը նաև կրթադաստիարակչական հիմնական ծրագրերի նպատակների իրագործումը ցույց տվող ցուցանիշների կատարման ընդունված մակարդակն է:
2. Նախադպրոցական տարիքի երեխաների համար գերագույն հաճույք է զբաղվել կերպարվեստային գործունեությամբ՝ նկարչությամբ, ծեփակերտմամբ, և կառուցողական աշխատանքով: Նման զբաղմունքը երեխային պարգևում է ուրախություն և բերկրանք: Կերպարվեստային գործունեության ընթացքում երեխան ստանում է ինքնարտահայտման և ինքնադրսևորման հնարավորություն, դրական զգացողություններ: Կերպարվեստային գործունեության ընթացքում տեղի է ունենում բուռն ճանաչողական զարգացում: Այս տարիքի երեխաներն արդեն ձևավորում են առարկաների ձևի, գույնի, չափի վերաբերյալ առաջին զգայական կողմնորոշումները, զզարգանում են լսելու, տեսնելու, դիտելու, վերլուծելու ունակությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մանկապարտեզի ավագ խմբի կրթական համալիր ծրագիր 2007թ
2. Մանկապարտեզի միջին խմբի կրթական համալիր ծրագիր2011թ
3. Մանկապարտեզի կրտսեր 2-րդ խմբի կրթական համալիր ծրագիր 2011թ
4. Ս. Ա. Մարության Ա. Մ. Դալլաքյան Նախադպրոցական մանկավարժություն, Երևան 2005թ